ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«12» հունվարի 2024 թվականի N 1-Ա
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 65-րդ հոդվածների դրույթներով. Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Չարենցավան համայնքի ավագանու արտահերթ թիվ 1 նիստի օրակարգը՝

1) Չարենցավան համայնքի 2023 թվականի բյուջեի 4-րդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի հաղորդման մասին:
2) Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հերթական թիվ 2 նիստի գումարման օրը սահմանելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-21 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Առաքելյան Նորայր
Բաբայան Արայիկ
Բաղդասարյան Սահակ
Գալստյան Արթուր
Գասպարյան Մելիք
Գևորգյան Գևորգ
Դավթյան Կարեն
Եփրեմյան Բաբկեն
Թադևոսյան Նունե
Խաչատրյան Արշակ
Հարոյան Լիլիթ
Ղամբարյան Գարիկ
Մակինյան Վարդան

Մալխասյան Նորիկ

Մուքայելյան Վալերի

Շահգալդյան Հակոբ

Պողոսյան Մնացական

Վարդանյան Նորայր

Վարդանյան Սարգիս

Վարդանյան Սևակ

Պապոյան Դավիթ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» հունվարի 2024 թվականի N 2-Ա

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 4-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի. Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Ի գիտություն ընդունել Չարենցավան համայնքի 2023 թվականի բյուջեի 4-րդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին համայնքի ղեկավարի հաղորդումը՝ համաձայն հավելվածի (կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում իրազեկելու պահից:

Կողմ-13	դեմ-7	ձեռնպահ-1
Առաքելյան Նորայր	Բաղդասարյան Սահակ	Պապոյան Դավիթ
Բաբայան Արայիկ	Գալստյան Արթուր	
Գասպարյան Մելիք	Թադևոսյան Նունե	
Գևորգյան Գևորգ	Խաչատրյան Արշակ	
Դավթյան Կարեն	Հարոյան Լիլիթ	
Եփրեմյան Բաբկեն	Մալխասյան Նորիկ	
Մակինյան Վարդան	Ղամբարյան Գարիկ	
Մուքայելյան Վալերի		
Շահգալդյան Հակոբ		
Վարդանյան Նորայր		
Վարդանյան Սարգիս		
Վարդանյան Սևակ		
Պողոսյան Մնացական		

Հավելված
Չարենցավան համայնքի ավագանու
2024 թվականի հունվարի 12-ի թիվ 2-Ա որոշման

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Չարենցավան համայնքի 2023 թվականի վարչական բյուջեի եկամտային մասով նախատեսված փաստացի եկամուտը կազմել է 1444161,7 հազար դրամ, որը տարեկան ճշտված պլանի նկատմամբ (1488277,1 հազար դրամ) կատարվել է 97%-ով (տե՛ս հատված 1):

<u>Ըստ հարկատեսակների կատարողականը ունի հետևյալ տեսքը.</u>

Գույքային հարկեր անշարժ գույքից փաստացի եկամուտը կազմել է 91185,1 հազար դրամ, որը կազմում է վարչական բյուջեի եկամուտների պլանի 67,7%-ը, իսկ տարեկան պլանի նկատմամբ կատարվել է 6,1%-ով:

Գույքային հարկեր այլ գույքից (փոխադրամիջոցների) գծով փաստացի եկամուտը կազմել է 238166,3 հազար դրամ, որը կազմում է վարչական բյուջեի եկամուտների 129,5%-ը, իսկ տարեկան պլանի նկատմամբ կատարվել է 16%-ով:

Տեղական տուրքերի գծով փաստացի եկամուտը կազմել է 15411,2 հազար դրամ, որը կազմում է վարչական բյուջեի եկամուտների 104%-ը, տարեկան պլանի նկատմամբ կատարվելով 1,04%-ով:

Պետական տուրքերի գծով փաստացի եկամուտը կազմել է 9177,4 հազար դրամ, որը կազմում է վարչական բյուջեի եկամուտների 114,7%-ը, տարեկան պլանի նկատմամբ կատարվելով 0,6%-ով:

Պետական բյուջեից ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ ստացված կառավարման այլ մակարդակներից նախատեսված 749981,2 հազար դրամի դիմաց ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիայի մասով հատկացվել է 741027,8 հազար դրամ, պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիայի մասով հատկացվել է 1305,7 հազար դրամ, իսկ նպատակային հատկացումներ /այլ սուբվենցիաներ/-ի մասով հատկացվել է 7647,7 հազար դրամ՝ որն ուղղվել է արտադպրոցական կրթության ժողովրդական գործիքների և այլընտրանքային ծառայողների սուբվենցիոն ծրագրերի համար:

Գույքի վարձակալությունից եկամուտների գծով փաստացի եկամուտը կազմել է 37328,8 հազար դրամ, որը կազմում է վարչական բյուջեի եկամուտների 129,5%-ը, իսկ տարեկան պլանի նկատմամբ կատարվել է 2,5%-ով:

Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից եկամուտները կազմել է 1999,0 հազար դրամ:

Վարչական գանձումներից փաստացի եկամուտը կազմել է 226593,5 հազար դրամ, որը կազմում է վարչական բյուջեի եկամուտների 82,3%-ը, տարեկան պլանի նկատմամբ կատարվել է 15,2%-ով:

Տույժերից և տուգանքներից փաստացի եկամուտը կազմել է 228,5 հազար դրամ, տարեկան պլանի նկատմամբ կատարվելով 22,85%-ով, որը կազմում է վարչական բյուջեի եկամուտների 0,015%-ը:

Այլ եկամուտների գծով փաստացի եկամուտը կազմել է 74090,5 հազար դրամ, որը

Ծախսերի գծով կատարողականը ունի հետևյալ տեսքը .

Հաշվետու ժամանակաշրջանում վարչական բյուջեի փաստացի ծախսը կազմել է 1460841,887 հազար դրամ, տարեկան պլանի նկատմամբ /1512234,3/ այն կատարվել է 96,6% -ով (տես հատված 2):

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների հատվածին հատկացվել է 432410,9 հազար դրամ, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 29,6%-ը:

Տնտեսական հարաբերությունների հատվածին հատկացվել է 69292,5 հազար դրամ, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 4,8%-ը :

Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերը հաշվետու ժամանակաշրջանում կազմում են 123914,9 հազար դրամ, տարեկան պլանի նկատմամբ /155794,3/ այն կատարվել է 79,5%-ով:

Շրջակա միջավայրի պաշտպանության համար հատկացվել է 180728,5 հազար դրամ, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 12,4%-ը:

Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայության համար հատկացվել է 8105,9 հազար դրամ, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 0,5%-ը:

Հանգիստ, մշակույթ և կրոն ոլորտի պահպանման համար հատկացվել է 33101,5 հազար դրամ, կազմելով փաստացի կատարված ծախսերի 2,3 %-ը:

Նախադպրոցական հիմնարկների պահպանման համար հատկացվել է 395754,1 հազար դրամ, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 27,1%-ը, իսկ արտադպրոցական հիմնարկների պահպանման համար հատկացվել է 298966,5 հազար դրամ, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 20,5%-ը, բարձրագույն մասնագիտական կրթությանը հատկացվել է 14120,0 հազար դրամ, կրթություն /այլ դասերին չպատկանող/ հատվածով հատկացվել է 3541,7 հազար դրամ, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 0,2%-ը:

Սոցիալական պաշտպանություն ոլորտի համար հաշվետու ժամանակաշրջանում հատկացվել է 24820,0 հազար դրամ:

Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդի պլանային թիվը կազմում է 11781,1 հազար դրամ:

Ընթացիկ ծախսերից աշխատանքի վարձատրության հոդվածին հատկացվել է 18,9%-ը, ծառայությունների և ապրանքների ձեռք բերմանը՝ 17,9%-ը: Սուբսիդիաների տեսքով ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին է հատկացվել համայնքի վարչական բյուջեի փաստացի կատարված ծախսերի 0,5%-ը կամ 7787,9 հազար դրամ:

Հաշվետու ժամանակաշրջանում համայնքային բյուջեից 208771,1 հազար դրամը ուղղվել է ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորմանը (տե՛ս հատված 3):

Չարենցավան համայնքի բյուջեի պակասուրդը (դեֆիցիտը) կազմել է 23091,0 հազար դրամ (տե՛ս հատված 4): Պակասուրդի (դեֆիցիտի) ֆինանսավորմանն է ուղղվել տարեսկզբի ազատ մնացորդը՝ 95293,8 հազար դրամ (տե՛ս հատված 4, 5), իսկ հաշվետու ժամանակաշրջանի վերջում բյուջեի հավելուրդը կազմել է 23091,0 հազար դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«12» հունվարի 2024 թվականի N 3-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 2 ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով Չարենցավան համայնքի ավագանին՝ ***որոշում է***.

1. Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հերթական թիվ 2 նիստի օր և ժամը սահմանել 2024 թվականի փետրվարի 15-ը, ժամը 12:00:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-21 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Առաքելյան Նորայր
Բաբայան Արայիկ
Բաղդասարյան Սահակ
Գալստյան Արթուր
Գասպարյան Մելիք
Գևորգյան Գևորգ
Դավթյան Կարեն
Եփրեմյան Բաբկեն
Թադևոսյան Նունե
Խաչատրյան Արշակ
Հարոյան Լիլիթ
Ղամբարյան Գարիկ
Մակինյան Վարդան

Մալխասյան Նորիկ

Մուքայելյան Վալերի

Շահգալդյան Հակոբ

Պողոսյան Մնացական

Վարդանյան Նորայր

Վարդանյան Սարգիս

Վարդանյան Սևակ

Պապոյան Դավիթ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ